Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(20-ը սեպտեմբերի 1998 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Հաստատուն պահեա զաշխարհն մեր Հայաստան եւ ամրացո զիմունս Հանրապետութեան ազգի Հայոց»:

Վաղը մեռավոտ ողջ Հայ ժողովրդի համար ի Հայաստան, ի Ղարաբաղ և ի Սփյուռս աշխարհի տոն է ցնծության, տոն է խոնարհության, տոն է հպարտության, անոր համար, որ մեր սիրտերը ուրախությամբ կեռան, երբ կտեսնենք ահավասիկ յոթ տարիներ անցան այն օրեն, երբ «ազատ» ու «անկախ» բառերը անքակտելիորեն դաջվեցին մեր հայրենիքին վրա: Մեր հայրենիքը ուրիշ անուն ուներ 1991 թվականեն առաջ՝ Սովետական Հայաստան, Ցարական Հայաստան, Տաճկական Հայաստան: Այսօր ուրիշ, իրեն հատուկ և անփոխարինելի անուն ունի մեր հայրենիքը՝ ազատ և անկախ Հայաստան՝ հայկական Հայաստան: Հայ ժողովրդի հայրենիք, Հայ ժողովրդի կամքով առաջ գացող երկիր: Մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր հատուկ Հայրապետական մաղթանք պիտի կատարե, հատուկ աղոթք առ Աստված, որ Աստուծո աչքը անպակաս ըլլա մեր երկրի վրայեն, որ այս երկիրը այլևս նահանջ, ետդարձ ու տկարություն չճանչնա, այլ անոր կյանքը ըլլա առաջադիմություն, ամրացում և զարգացում: Եվ ես, իբրև Հայոց Եկեղեցու Հայրապետ, այսօր պիտի նախագահեմ այս աղոթքին և ի խորոց սրտի՝ ձեր բոլորի սրտերեն աղոթքները քաղելով ծաղիկներու նման ծաղկեփունջի պիտի վերածենք և Աստուծո խորանին պիտի ընծայենք՝ խնդրելով Աստուծմեն, որ անշարժ, անտասան և առաջագնաց պահե այս մեր նոր Հայաստանը՝ ազատ ու անկախ հանրապետությունը:

Սիրելիք, անկախություն ունենալը կնշանակե ինքզինքը ինքնորեն և ինքնակամորեն, ինքնիշխան կերպով ապրիլ: Գերի մարդը, այն մարդը, որի կյանքը ուրիշին կամքեն կախում ունի, ամբողջականորեն մարդ չէ: Ոչ ազատ մարդը լրիվ, ամբողջական մարդ չէ: Աստված մարդ ստեղծած է ազատ կամքով: Ուրիշի ազատությունը կապտել, բռնությամբ գրավել, սա Աստուծո դեմ գործված մեղք է: Այսօր, երբ մենք հասել ենք այդ ազատ ու անկախ գոյավիճակին, այլևս մեր հայացքները, մեր մտածումները դեպի ո՞ւր կերթան, մեր գործերը դեպի ո՞ւր կուղղվեն, այս է, որ մեր արժանիքը կշիռն է: Հիմա Հայաստանը մերն է, բայց ինչպե՞ս պիտի ըլլա այդ Հայաստանը, մենք ի՞նչ կընենք ամեն մեկս: Մեր հանրապետության վսեմաշուք նախագահեն մինչև Կաթողիկոսը, մինչև պետական անձնավորությունները, ժողովրդի զավակները, կազմակերպությունները: Մենք ի՞նչ կընենք, որպեսզի մեր հայրենիքը ըլլա այն, ինչին որ մենք կհավատանք, որ պետք է ըլլա: Բարգավաճ երկիր,

երջանկության երկիր, բարօրության երկիր: Ասիկա ցնծության օր է, բայց նաև ըսի՝ խոնարհության օր է: Խոնարհվիլ Աստուծո առջև և ըսել. «Փա՜ռք քեզ Աստուած, Փա՜ռք քեզ, որ տվիր մեզ այս օրը, որ մեր ննջեցյալ հայրերն ու մայրերը չկրցան տեսնել»: Խոնարհությունը մեծություն է և ոչ թե պստիկության, և ոչ թե նսեմություն: Աստուծո առջև խոնարհ եղող անձը կմեծնա Աստուծո աչքին, ինքզինքը ամբարտավան նկատող մարդն է, որ կպստիկնա: Ինչպես կրսե Ավետարանը. «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի (Ղուկաս ԺԴ 11): Այն, որ իր անձը կմեծցնե, պիտի խոնարհի, բայց այն, որ իր անձը կխոնարհեցնե, պիտի բարձրանա Աստուծո աչքին, հայրենիքի աչքին:

Երրորդ՝ հպարտության օր է: Ցնծություն, խոնարհություն և հպարտություն: Հպարտությունը արդար է, երբ գործով սնուցված է: Այլապես հպարտությունը սիրամարգի փետուրներու նման անիմաստ հպարտություն է: Ծառ մը կանաչ, բայց անպտուղ, ամբողջական իմաստով ծառ չէ: Երբ աշունը տերևները գետնին կթափվին, կարծեք թե երբեք եղած չըլլային: Պտուղն է, որ կարժևորե ծառը, գործն է, որ կարժեցնե հպարտությունը: Հպարտությունը արդար է, երբ քո ջանքով շահված է և ոչ թե տրված է քեզի քո հայրենեն: Եվ այսօր մենք այդ երեք ապրումները՝ ցնծություն, խոնարհություն և հպարտություն, ներդաշնակենք իրարու և կարենանք հայրենիքին նվիրվիլ, այս հայրենիքը մեծցնելու, բարձրացնելու համար առաջիկա տարիների ընթացքին:

Իմ խոսքի երկրորդ մասը քիչ առաջ այս խորանին վրա պարգված տեսարանին մասին է: Փառք կուտամ Աստուծո, որ այսօր տասնմեկ երիտասարդներ, մեր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ, իրենց կյանքերը ընծայաբերեցին Աստուծո խորանին և մեր ժողովրդի ծառայությանը: Իմ հոգիս լցվեցավ արդար ուրախությամբ, երբ տեսա անոնց ինքնընծայումը, իրենց անձերու ընծայումը: Անոնք վեց տարիներ կարդացին մեր հոգևոր ճեմարանում և ահավասիկ իրենց դասերը ավարտած այսօր ստացան սարկավագության աստիճան և առաջիկա տարվա ընթացքին պիտի պատրաստեն իրենց ավարտաճառերը, իրենց թեզերը, որպեսզի արժանի ըլլան իրենց վկայականին և ապա ձեռնադրվին աբեղա կամ քահանա՝ իրենց կյանքերը ամբողջապես ընծայելու համար մեր Սուրբ Եկեղեցուն, մեր ազգին, մեր մշակույթին ու մեր դպրոցին:

Բարեկամներ, հարազատ հավատացյալ եղբայրներ, թող այս ըլլա այս տարվա իմ ընծան հանուն մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր Հանրապետության: Այս շաբաթ նման շրջանավարտ սաներ՝ ութ սարկավագներ, բանակ դրկեցի, որ երթան, մեր զինվորներուն հոգևոր կյանքովը զբաղվին: Ո՞վ պիտի սնուցանե հոգին այս ժողովրդին: Անոնք իրենց կրծքերը վահան ըրած հայրենիք կպաշտպանեն, և Եկեղեցին անոնց հետ պետք է ըլլա զանոնք հոգեպես զորացնելու համար, ինչպես Ղևոնդ Երեցը Ավարայրի ճակատամարտին հայոց բանակին հետ էր, ինչպես ուրիշ հոգևորականներ Սարդարապատի կռիվին իրենց կյանքերը միախառնեցին հայրենիքը պաշտպանող զինվորներու կյանքերուն:

Այսօր ուրախ է մեր Եկեղեցին, որ այսպիսի սերունդ մը կընծայե իր ժողովրդի հոգևոր կյանքի առողջացման, վերանորոգման ու զորացման

համար: Ուրիշ անգամ ըսած եմ՝ Եկեղեցին այս քարը, այս աղյուսը, այս մոմը, այս գահը չէ, Եկեղեցին դուք եք, մենք ենք բոլորս, հավատացյալներս ենք: Ղևոնդ Երեցը ճակատամարտի դաշտին վրա պատարագ մատուցեց առանց եկեղեցիի շենքին: Եվ ինչպես ասած եմ, անգամ մը ևս կկրկնեմ, ամեն մեկ զինվոր Եկեղեցի է ինքն իր մեջ, հավատքը իր մեջ կենդանի է: Եկեղեցին այդ հավատքին՝ ներգործությունն է, ազդեցությունն է մեր ընտանեկան կյանքին մեջ, մեր անհատական կյանքին մեջ և մեր ազգային կյանքին մեջ: Հետևաբար այսօր քաղցրորեն ողջունելով մեր հանրապետության անկախության յոթերորդ տարեդարձը, հոգեկան լի սրտով ու գոհունակությամբ այժմ կիրավիրեմ մեր միաբանները, որ բարձրանան խորան և դուք ալ մեր հետ միասին մասնակցեք աղոթքին: Աղոթք ընենք, փառք ու գոհաբանություն մատուցենք Աստուծո, մեր հայրենիքի այս յոթերորդ տարեդարձի առիթով «Հայրապետական մաղթանք» բառերին ներքո:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐԸՆԾԱ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

«Բարեշնորհ սարկավագներ: Առաջին անգամ է, որ այս բառը գործածում եմ ձեզ համար: Աբեղային, վարդապետին ասում ենք հոգեշնորհ, սրբազաններին՝ գերաշնորհ, իսկ ձեզ ասում ենք բարեշնորհ: Բարի շնորհներ իջնեն ձեր վրա և այսօրվան արարողությունը լինի մի կերպարանափոխություն ձեր կյանքում: Աստուծո շնորհը ձեր վրա դառնա փոփոխիչ մի ուժ: Երեկ այսինչ այսինչյանն էիք մինչև այս առավոտ, հիմա սարկավագ եք, անհատական անունին վրա ընդհանրական անուն մը ավելցավ և այդ անուններին տեր պիտի կանգնենք: Այլևս չեք անհատ, այլ ժողովրդին պատասխանատվության ճամփուն վրա առաջին քայլն արիք սարկավագ ձեռնադրվելով: Ես կմաղթեմ, որ դուք մեր միաբանությանը, այս խոնարհ Աբոռին նոր շունչ, նոր ոգի ու նոր ուժ տաք: Ի վերջո մենք պիտի մեր ժողովրդի զավակներին ծառայենք Հայաստանում, և որևէ մի տեղ, ուր մեր եկեղեցական իշխանությունը ուղարկի մեզ: Օրհնում եմ ձեզ, և ամենից առաջ շնորհավորում Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ Սրբազանին, որ այսօր ինքը կատարեց ձեռնադրության կարգը: Նաև իմ ջերմ շնորհակալություններն ու շնորհավորանքներն եմ հայտնում ձեր տեսուչ Հայկազուն ծ. վրդ Նաջարյանին, որ երեք տարիներից ի վեր ձեզ հոգս է տանում դպրեվանքում իբրև տեսուչ»:

Այնուհետև սարկավագները ծունկի եկան Վեհափառ Հայրապետի առջև, և Նա իր օրհնության խոսքն ավարտեց «Պահպանիչ»-ով: